

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
3 մարտի 2003 թ.
Պետական գրանցման թիվ 11203070

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ԵՎ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ

26 սեպտեմբերի 2002 թ.

N 518-Ն

20 փետրվարի 2003 թ.

N 131-Ն

ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանումների դեպոզիտային հաշիվների տնօրինման կարգը (հավելված 1):

**ՀՀ արդարադատության
նախարար
Դ. Հարությունյան**

**ՀՀ ֆինանսների և
էկոնոմիկայի նախարար
Վ. Խաչատրյան**

Հավելված 1

Հաստատված է՝
ՀՀ արդարադատության նախարարի
26 սեպտեմբերի 2002 թ.
թիվ 518-Ն հրամանով
_____ *Դ. Հարությունյան*

Հաստատված է՝
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի
20 փետրվարի 2003 թ.
թիվ 131-Ն հրամանով
_____ *Վ. Խաչատրյան*

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետև՝ ԴԱՀԿ) ծառայության մարզային ստորաբաժանումների դեպոզիտային հաշիվների (այսուհետև՝ դեպոզիտային հաշիվ) տնօրինման (այդ հաշիվներից դրամական միջոցների հատկացման) գործընթացը:

2. Ղեկավարողի տնօրինման հաշիվների մուտքագրման դրամական միջոցների տնօրինումն իրականացվում է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին» 10/06/1999 թ. թիվ 404 և «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» 18/01/2002 թ. թիվ 48 որոշումների պահանջներին համապատասխան գանձապետական արտաբյուջետային հաշիվների տնօրինման համար սահմանված ընթացակարգով՝ հաշվի առնելով սույն կարգի 3-ից 5-րդ կետերով սահմանված առանձնահատկությունները:

3. Կատարողական գործողությունների կատարման ծախսերի փոխհատուցման համար ղեկավարողի տնօրինման հաշվից դրամական միջոցների ելքագրման նպատակով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժանմունք՝ (այսուհետև՝ ՏԳԲ) ներկայացվող վճարման հանձնարարագրերի և կանխիկի տրամադրման հայտերին կից, ՏԳԲ են ներկայացվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված գանձապետական հաշիվներից միջոցների ելքագրման նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացվող ծախսերը հիմնավորող փաստաթղթեր՝ այդ ծախսերի տնտեսագիտական բովանդակությանը համապատասխան:

4. Սույն կարգի 3-րդ կետում չներառված ուղղություններով ղեկավարողի տնօրինման հաշիվից դրամական միջոցների ելքագրման նպատակով ՏԳԲ ներկայացվող վճարման հանձնարարագրերի և կանխիկի տրամադրման հայտերին կից, որպես ծախսերը հիմնավորող փաստաթղթեր՝ ՏԳԲ են ներկայացվում համապատասխան կատարողական թերթիկների պատճենները:

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված ուղղություններով ղեկավարողի տնօրինման հաշիվներից կանխիկ ձևով դրամական հատկացումներ կարող են տրամադրվել միայն ֆիզիկական անձանց:

6. Դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից համապատասխան կատարողական թերթի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումը չեն համարվում պետական կարիքների համար գնումներ: